ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Կովկասեան նոր փոխարքայի գալուստը։—Ռուսիայի ներքին քաղաքակա-նութեան յեղաշրջումը. ռուս մտքի այժմեան արտայայտութիւնը. մամուլի արդի լեզուն. գեղեցիկ գրականութիւն. „Свѣтъ“ և „Русскій вѣстникъ“ առաջ և այժմ. վերջնիս կարծիքը ներկայ դրութեան մասին. ռուս բիւրո-կրատիայի պահանջը. խօսքից գործ անցնելու անհրաժեշտութիւնը. ռուս ա-զատամիտ կուսակցութեան պահանջները. հպատակ ազգերի պահանջների չա-փաւորութիւնը. հպատակ ազգերի հաւատարմութեան զգացումները. Կովկաս խառնակութիւնները շարունակւում են. Բաղուի վիճակը. սեն. Կուզմինսկու քննութիւնը—կոտորածների պատճառների և այլ հաստատութիւնների վերա-բերմամբ. Թիֆլիսի գաւառի խռովութեանց սոսկալի միջնադէպը. Կովկա-սեան նոր փոխարքան որպէս միակ յոյս արդի դրութեան. տեղեկութիւն-ներ նորա ապագայ գործունէութեան մասին. ժողովրդական ներկայացու-ցիչների ապագայ համագումարի ծրագիրը. կրօնական ներկայացուցիչների մասնակցութիւնն այդ ժողովին. հրմարտակ հաւատի համբերողութեան մասին. վերացումն հալածանքի կրօնափոխութեան դէմ. ինչ ունի Էջմիա-ծինը անելու այդ մասին. Թիֆլիսի ներկայացուցիչները Պ. Բուրգում. նոցա ներկայանալը Կովկասի փոխարքային եւ ներքին գործերի նախարա-րին. ռուս հրապարակախօս Ա. Նովիկովի նամակը Բաղուի նահանգա-պետ իշխ. Նակաշիձէին եւ վերջնիս դատի կանչելը նորան. ծնողական ժողով Թիֆլիզում. Հայոց համագումար ժողովը. Հայոց պետիցիայի վերջնական խմբագրութիւնը։ Մեր վրացի եղբայրներին։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԹԻՖԼԻՍ

Մայիսի 5-ին, ցերեկուայ 2 ժամին արտակարգ գնացքով՝ Թիֆլիս ժամանեց Կովկասի նոր փոխարքայ կոմս Ի. Ի. Վո-ռոնցով-Դաշկովը իւր ամուսնու, աղջկայ և հարսի հետ։

Երկաթուղու կայարանում կոմսին դիմաւորեցին իւր օգ-նականները՝ ժեն. Մալաման, Սուլթան Կրիմ-Գիրէյը և Շիրին-

կին, Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը, փոխարքայի դիւանատան ծառայողներ; Թիֆլիսի քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամներ, աղնուականների պարագլուխը, արհեստաւորների գլխաւորը և այլն։— Քաղաքագլուխը կոմս փոխարքային մատուցանելով աղուհաց փայտէ ափսէով, ողջունեց նորա գալուստը մի ընդարձակ ճառով քաղաքի կողմից, իսկ Թիֆլիսի ամէն ազգի տիկիններ մատուցին փոխարքայի ամուսնուն ծաղկէփնջեր։

Կայարանից փոխարքան իւր շքախմբով և բոլոր հետևորդներով, ձի հեծած ուղևորուեց դէպի ոուսաց Սիօն մայր եկեղեցին։ Բոլոր փողոցները, ուր որ անցնում էր հանդէսը՝ զարդարուած էին դրօշակներով, կանաչով և գորգերով։ Սիօն եկեղեցում փոխարքային դիմաւորեց ս. Էքսարխը յունադաւան հոգևորականութեան հետ. այնտեղից նա ուղղուեցաւ դէպի Վանքի աւագ եկեղեցին, ուր ընդունեց նորան առաջնորդ Սաթունեան սրբազանը հոգևորական դասի հետ մի ճառով, որ թարգմանում էր ռուսերէն Տ. Բենիկ վարդապետը։ Այդտեղ ներկայացաւ փոխարքային մայր եկեղեցու ժրաջան երեցփոխան պ. Արշակ Բաբեանը և մի քանի ծանօթութիւններ տուաւ կոմսին և կոմսուհուն տաճարի կառուցման ժամանակի մասին։

Այդտեղից փոխարքան այցելեց մահմեդականների կրկին մզկիթները, ուր ընդունուեց նոցա հոգևորականութեան կողմից պատշաճաւոր կերպով։

Այնուհետև փոխարքան գնաց պալատ, ուր նորին պայծառափայլութեան ներկայացան բարձրաստիճան անձեր, քաղաքների, ընկերութիւնների, բանկային և այլ հաստատութիւնների ներկայացուցիչներ, հիւպատոսներ, լրագիրների խմբագիրներն և այլն։

Հետևեալ օրը, մայիսի 6-ին, փոխարքային ներկայացաւ Ազգիս Վեհ. Կաթողիկոսի ուղարկած պատգամաւորութիւնը՝ սրբ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան երկու վարդապետներով, որ մատոյց նորան Նորին Ս. Օծութեան ողջոյնը, առ որ փոխարքան յայտնելով իւր շնորհակալութիւնը՝ աւելացրեց թէ ինքը մօտ ժամանակում կայցելէ Վեհ. Հայրապետին Ս. Էջմիածնում։

Այն խառնաշփոթ կացութիւնը, որի մէջ ներկայումս գտնուում է Ռուսիան, տարօրինակ երևոյթների վկայ է դարձնում մեզ։ Երկրի քաղաքական և ընկերական կեանքի հանգամանք-